Ո՞րչափ մնացած է Աղթամար և ի՞նչ ըրած է, ոչ մէկ տեղեկութիւն կայ այս մասին։ Հաւանական է, որ Յովհաննէս Թիւթիւնճի իբր հակառակորդ Էջմիածինի, դեր մը ունեցած է այն փորձին մէջ, զոր Աղթամարի Մարտիրոս Գուրճի կաթողիկոսը կատարած է օգտուելով Թուրք և պարսիկ պատերազմներէն, իւրացնելու համար Էջմիածինի պատկանող վանի, Բերկրիի, Արճէշի, Խլաթի, Բաղէշի, Մուշի, Խոշապի և մինչև Ամիթ տարածուող թեմերը, և անոնցմով կազմելու առանձին կաթողիկոսութիւնը (տես Զամբռ. էջ 93), անշուշտ եղիազար Այնթապցիի օրինակով։

Յովհաննէս Թիւթիւնճի, որ եղիազարի օգնած էր ընդդէմ Էջմիածինի, հաւանօրէն օգնած է նաև Մարտիրոս Գուրճիի, թերեւս իբր աթոռակից։

Հաւանական է ենթադրել, վերոգրեալ յիշատակարանին վրայ հիմնուելով, թէ նոյնիսկ 1669ին արդէն Աղթամարի աթոռը թողած էր և կը բաւականանար միայն վանի առաջնորդութեամբ։

Ինչպէս յիշատակարանը կը հաւաստէ, Յովհաննէս Թիւթիւնճի ձեռներէց առաջնորդ մը եղած է, վանի առաջնորդութեան հետ վարելով նաև Վարագայ, Սալնապատի և Հոգւոց վանքերու վանականութիւնը, և չինարար գործունէութիւն մը ունեցած է։

Արդարև՝ վերոգրեալ յիշատակարանը ցոյց կուտայ, թէ անիկա ճարպիկ մէկը եղած է, և Վարագայ վանքին մէջ կատարած է բազմաթիւ չինութիւններ, որոնց մէջ նշանաւոր էր Վարագայ լերան ապառաժ կողին վրայ փորել տուած առուն, որ իբր ջրաղաց ծառայած է, ինչու որ առջի առուն խափանուած էր մեծ չարժի մը պատճառով 1669ին։